

Հաստատված է
«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 005 նիստով
Խորհրդի նախագահ
Բ. Ասատրյան
<<30>> հունվարի 2013թ.

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

ԱՎՏՈՍԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՄԲ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույնով սահմանվում է ավտոմեքենաների գրավադրմամբ «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ ընկերություն) կողմից վարկերի տրամադրման կարգը:
- 1.2. Գրավի առարկա կարող են հանդիսանալ (արտասահմանյան արտադրության, բացի ռուսական, չինական և իրանական արտադրության մեքենաները, որոնց արտադրության տարեթիվը վարկի մարման վերջնաժամկետին չի գերազանցի 16 տարին):
- 1.3. Գրավադրվող ավտոմեքենաները նախքան վարկի տրամադրումը հաճախորդի կողմից ենթակա են պարտադիր ապահովագրման վարկի գումարից ոչ պակաս չափով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիցենզիա ունեցող ապահովագրական ցանկացած կազմակերպության կողմից:
- 1.4. Գրավադրվող ավտոմեքենաները պետք է ապահովագրված լինեն վարկի գործողության ամբողջ ժամանակահատվածում:
- 1.5. Ավտոմեքենաների գրավի դիմաց տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել ավտոմեքենայի գնահատված շուկայական արժեքի 50 %-ը, բայց ոչ ավել 10,000,000 դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:
- 1.6. Վարկի տրամադրման համար սահմանված միանվագ վճարը, տոկոսադրույքը ինչպես նաև այլ պայմանները սահմանվում է այդ պահին Ընկերությունում գործող սակագներին և պայմաններին համապատասխան:

2. ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- 2.1. Վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը հետևյալն են՝
 - 2.1.1 Գիմում-հայտ վարկ ստանալու վերաբերյալ,
 - 2.1.2 Վարկառուի, գրավադրվող գույքի անձնագրի, սոցիալական քարտի պատճեն,
 - 2.1.3 Վարկառուի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր,
 - 2.1.4 Գրավադրվող գույքի սեփականատիրոջ ամուսնության վկայականի պատճենը, ամուսնու անձնագրի պատճենը (եթե ամուսնացած է), կամ հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ (եթե ամուսնացած չէ),
 - 2.1.5 Գրավադրվող ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը,
 - 2.1.6 Գրավադրվող ավտոմեքենայի սեփականության վկայականը,
 - 2.1.7 Տեղեկանք ՀՀ Ոստիկանության պետավտոտեսչությունից գրավի առարկան արգելանքի տակ չլինելու վերաբերյալ,
 - 2.1.8 Գրավադրվող գույքի ապահովագրություն,
 - 2.1.9 Տեղեկանք ՀՀ ԿԲ վարկային ռեզիստրից կամ ԱԶՌԱ բյուրոյից վարկային

պարտավորությունների վերաբերյալ:

- 2.1.10 Այլ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է ընկերությունը:
- 2.2. Վարկային գործը համարվում է ընդունված, եթե հաճախորդը ներկայացրել է սույն Կարգի 2.1 կետով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
 - 2.2.1 Վարկային մասնագետը ուսումնասիրում է հայտը, կազմում եզրակացություն, գործը ներակայացնում կոմիտեին, վերջինս կայացնում է վարկի տրամադրման կամ մերժման որոշում:
 - 2.2.2 Կոմիտեի կողմից վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո կնքվում է վարկային և գրավի պայմանագրեր, գրավի առարկան դրվում է արգելանքի, ապահովագրվում է և վերջիններս հավաստող փաստաթղթերը ստանալուց հետո միայն կատարվում է վարկի գումարի հատկացում:
 - 2.2.3 Գրավի պայմանագիրը կնքելուց հետո ավտոմեքենայի սեփականության վկայականը ի պահ է հանձնվում Ընկերությանը մինչև վարկային պարտավորությունների ամբողջությամբ կատարումը:
- 2.3 Հաճախորդի կողմից կատարվելիք վճարումների կարգը, վարկային պայմանագրի խախտման հետևանքով առաջացած տույժերի և տուգանքների սահմանաչափերը սահմանվում են այդ պահին ընկերությունում գործող պայմաններին, վարկավորման, գործունեության կարգերին համապատասխան:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 3.1 Սույն կարգը հաստատվում է Ընկերության Խորհրդի կողմից, կարգում փոփոխությունները կատարվում են Խորհրդի համաձայնությամբ և ենթակա են հաստատման վերջինիս կողմից: Սույն Կարգով սահմանված պայմաններից և սահմանաչափերից որևէ մեկի շեղման դեպքում վարկի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացնում է Ընկերության Խորհուրդը: : Սույն կարգի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 12.02.2010թ. Խորհրդի թիվ 04 նիստով հաստատված «Ավտոմեքենայի գրավով վարկերի տրամադրման կարգ»-ը: